

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԲԱՆԱՏԵՂՑՈՒԹԻՒՆԸ

Ք Ն Ն Ո Ւ Թ Ի ւ ն

Ա. ԳԱԼԱՆԹԱՐԻ

Մեր առաջ դրւած է պ. Յովհաննիսեանի բանաստեղծութիւնների գրքովկը՝ տպւած Մօսկաւամ, 1887 թւականին։ Այդ գրքովկը լուս ընծավելոց մետով, պ. Յովհաննիսեանը հրատարակել է «Աղբիւր» ամսագրում և Մօսկավի «Հանդէս»-ում մի քանի ոտանաւորներ։

Մենք կը խօսենք միայն առանձին հրատարակւած գրքովկի մասին։ Ընթերցող հասարակութիւնը կարող է նորան հեշտ իւր ձեռքին ունենալ և, որչափ լսում ենք, հասարակութիւնը բաւականին ուշադիր է եղել զէպի մեր նոր բանաստեղծը։ Այդ գրքովկից դրւած գրած ոտանաւորների մէջ արդարն կան շատ գեղեցիկ տողեր, բաց չեն նշմարում դեռ անպիսի նոր դաշլավիկներ, որոնք անծանօթ վլնէին գրքովկի ընթերցողին։ Ուստի գրքովկի մէջ ամփոփած բանաստեղծութիւնների մասին ասածները մերձաւորապէս ճիշդ կարելի է համարել և առհասարակ մինչև ալժմ լուս ընծաված ոտանաւորների համար։

Ամենքը ողջունեցին պ. Յովհաննիսեանի երևալը, որովհետև վերջապէս տեսան բանաստեղծ, որ ուշադիր է զգացմունքների կեանքին և որին հետաքրքրում են թէ իւր և թէ շըշապատողների սրտի լուզմունքների ելեէջները։ Կարդացին երգեր, որոնք ակնարկում են ազնւութեան, ոսկի երազների, քաղցր մեղեղիների և վերին թուիչքների մասին, որոնցով անքան աղքատ է մեր առօրեակ անբանաստեղծական կեանքը։ Եւ աղդ բոլորը —գրւած աղատ գրչով, որ չէ վարանում բառեր գտնելու իւր սրտի զեղմունքը արձանագրելու։

Ընթերցողը կարդաց, գնահատեց և պ. Յովհաննիսեանին ուրախութիւնով լնդունեց մեր սակաւաթիւ բանաստեղծների շարքը։

Ճնորհաւորում ենք՝ մեր հասարակութեան մէջ այդ նոր բանաստեղծի գալուստը, բանաստեղծի, որի դասակարգին է վերապահւած, ըստ աւան-

գութեան, խօսքով թնդացնելու սրտի լարերի ամենանուրբ շարժումները և արձագանք լինելու մեր հոգեկան կեանքի փոփոխութիւններին:

Խսկական բանաստեղծներ մեր մէջ հազրագիւտ են և ալդ պատճառով շատ կարեոր է, որ մենք գիտակցարար վերաբերւնք դէպի այն նոր երիտասարդները, որոնք փորձում են խօսել մեր զգացմունքների, մեր երեսկարութեան աշխարհից:

Ընդունելով պ. Յովհաննիսեանի մուտքը մեր հասարակութեան շրջանները կատարւած և նորա բանաստեղծութեան ընդհանուր արժէքը լաւ կողմից գնահատուած՝ թույ ենք տալիս մեղ՝ խօսելու մեր առաջ դրած գրքովի մասին, առանց լանձնարարականների:

Մեր ջողածը կը բաժանենք երկու մաս՝ ընդհանուր և մասնաւոր, Առաջինում կը խօսենք ընդհանրապէս պ. Յովհաննիսեանի բանաստեղծութիւնների մասին, որոշելով նոցա որականութիւնը, բովանդակութիւնը և արտակարսելու ձեւը, Երկրորդում կը քննենք, իրեն նմուշներ, ոտանաւորների մի ամբողջ շարք, ցուց տալով նոցա՝ իբրև առանձին գրւածքների՝ առանձնակատկութիւնները:

I

Պ. Յովհաննիսեանը իւր գրքովկով ոգմորւած գրողի տպաւորութիւն է թողնում ընթերցողի վերաբ նա խօսում է անդադար, զանախ կրկնելով իւր դիմառնութիւնները, առաջարկելով իրան խնդիրներ և զանազան տեսակ նոցա ձևակերպելով: Զը նակելով դորան՝ ընթերցողը այնու ամենանիւ չէ կարողանում պարզել իւր լարաբերութիւնները դէպի նոր բանաստեղծը և մնում է վերջ ի վերջով տարակուած:

Ոտանաւորների բովանդակութիւնը, նոցա մէջ լայտնած բանաստեղծի հակեացքները դեռ պարզ զաղափար չեն տալիս մեղ՝ թէ ինչն է խսկապէս պ. Յովհաննիսեանին ոգմորողը. ինչն է կազմում նորա ներքին իղձը. թէ ինչ կարելի է սպասել նորանից ապագայում:

Թէև ոտանաւորների մէջ լայտնած հակեացքները խառն են, ալնուամենանիւ փորձնենք նոցանից մի քանի եղրակացութիւններ դուրս բերելու. Տեսնենք՝ դիցուք՝ ինչպէս է վերաբերում բանաստեղծը դէպի բաղդը, դէպի երջանկութիւնը, Ոտանաւորների ընթերցումից անպէս է դուրս գալիս, որ բանաստեղծը բաղդին լատկացնում է անդորրութիւն, փափկութիւն և անդորդութիւն: Նա ասում է.

Աքնաեղ զգում եմ փարթամ երջանիկ

Գըլորուելու են իմ կեանքի օրեր,

Աչագեղ կոչսը հակեացք չքնաղիկ

Պարզեում է ինձ և սրբանուէր

Նոճիների տակ պիտ' զլուխըս հանդչի
Նորա մարմարիոն կուրծքին նազելի... (Երես 4)

Այդ տեսակ որոշումներ շատ են կրկնւում գրքովկում. Բանաստեղծը շատ մեծ նշանակութիւն է տալիս ազդ առօրեակ հասկացւած բաղդին—ամեն տեղ հրճւաճքով է խօսում նորա հրապումների մասին և նորան իդէալացնում է՝ օժանելով շատ գրաւիչ պարագաներով. Կարծես թէ զգական կեանքը արդէն շատ հեշտ ձեռք բերելու բան է և կամ լարատեռ մեծաբովանդակ ուրախութեան մի աղբւր է:—Դեռ շատ վճելի խնդիր է, թէ իսկապէս որչափ է աշխարհում զաջողւում աճնպիսի մի կեանք, որտեղ միան զւարճութիւններ լինէն, իսկ ցաւերը, առօրեակ հոգսերը՝ բացակաւ, Բանաստեղծը տալիս է հետեւեալ բացատրութիւնը.

Երջանիկ մի օր ես մոտածում եմ
Բաղդը չի բանակ երբէք ինձ համար...
Զէ կարող էի և ես բիրտ ոկտով
Կամ մի սատրաքարշ շողոքորթութեամբ
Հաշտուել մարդկանց հետ և պատաժ ոսկով
Հոչակ սատանալ պատուաւոր անուամբ.
Բայց ոչ, չը կամիմ զըլուխ խոնարհել... (Երես 42)

Բանաստեղծը ալզպիսով կարծում է, որ երջանկութեան նա կարող է հասնել, եթէ միավն համաձանի իրան ծախել՝ ուրիշին շողոքորթելով կամ բիրտ ոգֆ գործադրելով: Եւ որովհետև երջանկութիւնը ձեռք է բերում ազդ տեսակ, ուստի բանաստեղծը հրաժարւում է նորանից, Բայց ան, ինչ որ բանաստեղծը հականերկաւացնում է երջանկութեան անքան ներքին ուրախութիւն, հոգեկան երջանկութիւն չէ իւր մէջ ներկապացնում, որչափ զոհ, զրկանք, տանջանք և նահատակութիւն: Մինչդեռ ընթերցողը սպասում է բանաստեղծից, որ նա մի ուրիշ երջանկութեան պատկեր բանակ նորա համար, մի աճնպիսի երջանկութեան, որի առաջ ամենաճն զրկանք և զոհ կորցնեն զրկանքի և զոհի նշանակութիւնը. ինչպէս հին ժամանակում ճգնաւորի անտանելի կեանքը համարւում էր դէպի Աստուած ունեցած սիրու առաջ—երջանկութիւն:

Բանաստեղծը կարծես ան հին կարծիքին է, թէ երջանկութիւնը ապրում է հովուերգական, նահապետական աշխարհում, Արկադիալում, և նա կորչում է ալն բոլոր տեղերում, ուր տալիս են գիտակցութիւն, չար ու բարու աւելի իրական հասկացողութիւն: Առանձին շեշտելով՝ նա խօսում է գիտութեան թունի մասին, նա ասում է.

Գիտութիւնը ինչպէս մի թոն դանդաղկու
Աննկատելի վարակեց հոգիս,

Ինչպէս ցուրտ ձմռու միտքըս կասկածու
Քաղեց, խորտակեց ծաղկը կեանքիս... (Երես 44)
Բաց ան օրից՝ երբ ողջոնս հրաժեշտի
Խմ մանկութեան քաղցր օրերին ևս տըւի
Երբ ես թողնը ճաշակեցի գլուխութեան՝
Երբ խաղալիք դարձաւ մարդկանց նենդութեան... (Եր. 84)

Ալդ տեսակ հասկացողութիւն ունենալով գիտութեան թունի և առօրեակ բաղդի մասին, բանաստեղծը հեշտ հիասթափում է նախկին իղէալ-ների վերաբերմամբ և հեշտ է տրամադրում կարծելու, թէ նա արդէն մաշ-մել է, ծերացել, և լավտնում է այս խոստովանութիւնը.

Զգում եմ արդէն հանդչում է հոգիս
Եւ չը կատ բոցը ովմտութեան
Զուր է քո խրախոս, զուր է, սիրելիս,
Եւ ինձ չի ծագի արեց դարնան...
Վառվուն կեանքից ես զեռ չը քաղած
Եւ ոչ մի ծաղիկ, արդէն ուժասպառ
Ընկած եմ որպէս մի ծերուկ մաշուած,
Եւ վակելչութիւնն արդէն ինձ օտար... (Երես 58)

Եւ սկսում է տրտունջ, լաց, կոծ, անվերջ տանջանքներ և թախիծ և այն մի հիասթափւած մարդու լուսահատական թախիծ, ձիշդն ա-սած՝ այդ թախիծը լուրջ տպաւրութիւն չէ գործում, նա սենեկավին ընպարութիւն ունի, նա զուրկ է խոր հիմունքներից բըդ-խած պատճառաբանութիւններից։ Եւ ալդ պատճառով ընթերցողի աշ-քում նա ստանում է մի տեսակ նմանողութեան, արհեստականութեան կնիք։ Դժւար է երևակալել, որ մեր երիտասարդ բանաստեղծը իսկապէս վնէր տանջւած, հալածւած և այն էլ խաւարից, մոլեռանդութիւնից (Երես 107—108) և ուրիշ արհաւիրքներից։

Թափիծ, լուսահատութիւն լսում է շատ ոտանաւրներում, որոնց ալսանել առաջ բերելը աւելորդ ենք համարում։ Խառն զգացմոնքների ազդեցութեան տակ բանաստեղծը հակասութիւնների մէջ է ընկնում, աշ-խատում է բացատրել իւր ալդ զգացմոնքների, իւր թախիծի պատճառը և երբեմն կարծելով, թէ արդէն գտել է նորան, նա ուզում է իրան մի կերպ հաշտեցնել և՛ վակելչութեան և՛ փշոտ ճանապարհի գաղափարների հետ և ասում է,

Եւ ես ասում եմ վակելչութիւնը
Կեանքի անխորհուրդ եռուն խնջուքի,
Ուր տիրագում է սև չարութիւնը,
Բուրմոնքը չը կատ սիրալառ սրտի։ (Երես 82)

Աշխարհ, ես քո կը հաւատամ վաղելքին,
կը հաւատամ երջանկութեան մարդկավին,
Երբ որ ձգես դու կեղծաւոր՝ ալդ դիմակ,
Երբ ողջունես մի նոր կեանքի արեգակ.
Երբ անինակ արդարութեան խարազան
Գո սրտիցը խըլէ սերմը չարութեան
Եւ ականջդդ բանակ լըսել երկնավին
Անմահ սիրով սուրբ բարբառը անմնկին. (Երես 85)

Եւ բանաստեղծը զգում է, որ կարող է միսիթարւել, որ կարող է հասնել լաւ վիճակի.

Կը գաէ և մի օր քո վառ արշալուս,
Դու կը մոռանաս անցեալի ցաւեր...
Կ'անցնէ խաւարը մոլեւանդութեան
Կը գաէ նոր սերունդ, զգալու ընդունակ...

Ի՞նչ ուրիշ միտք կամ խնդիր ենք գտնում գրքովկի մէջ, որոնց մէջ ցոլար բանաստեղծի աշխարհահանեացըը. Մի քանի տեսակ փորձեր կան, որ նք սական չեն բնարոշում մեր բանաստեղծին. Գաղափարները կամ փիլսոփիայութիւնները, որ մոցնում է բանաստեղծը իւր ոտանաւորների մէջ, նորութիւն կամ մի առանձին թարմութիւն չեն պարունակում իրանց մէջ և աղբալիսով ոտանաւորները ոժեղ տպաւորութիւն չեն գործում. Փիլսոփիայութիւնները չառ են աւանդական. Պորորինակ՝ համապատասխանում են մի որ և է առածի. դիցուք՝

Մի թիգ հող է մեր բաժինը (Երես 23)

Մեր կեանքը վաղանցիկ է (Երես 16)

Պատանին կը ծերանակ (Երես 13)

Հող էիր և հող գարձար (Երես 20)

Ուրախութիւննից վիշտ (Երես 111) և ալլ.

Ձոկ բան է, երբ ասելու մէջ մի որ և է նորութիւն կաէ—այն ժամանակ ոտանաւորը կարող է խակապէս հետաքրքրել. Իրեն նմուշ մի ոտանաւորի, որտեղ մուքի արտակարտութեան ձեզ փոքր ինչ նորութիւն, ինքնուրսն մշակում է ներկայացնում—առաջարկում ենք ընթերցողին «Երկու համբուլը»:

Պ. Ցոլհաննիսեանը վիրաւի դնում է ամբոխի խնդիրը, բաց երեսակալում է, կամ միշտ նկարագրում է ամբոխի կեանքը տանջանքներով, տառապանքներով լվաց, միշտ աղքատ, միշտ տարագիր. Այն կերպ են դասաւորած մտքերը, որ կարծես, եթէ ամբոխը լինէր երջանիկ—բանաստեղծը ամբոխով հետաքրքրելու նիւթ չէր ունենալ. Ամբոխը ամբոխ է

և նա ունի իւր ուրախութիւնը և ցաւը. նա երգում է և լաց է լինում. Ովսիրում է ամրոխը, նա ովերուում է նորա ուրախութիւնով և ստեղծագործական ուժով, նա տանջուում է նորա ցաւով. նա արձագանք է նորա բոլոր կեանքին. Ոտանաւորներից մարդ չէ կարողանում մի որ և է զաղափար կազմել, թէ ինչ զրական զգացմունքների կամ մտքերի են համապատասխանում՝ վաստակաւոր, ճնշող շղթակ, սարկութիւն և ուրիշ ազտեսակ բառերը:

Մի քանի խօսք պ. Յովհաննիսեանի մտածելու և լորինելու ձեփ վերապ. Յովհաննիսեանը նախ իւր գրածքների մէջ շատ սուբիեկտիւ է, զրաղած իւր անձնական զգացմունքների զարդացումով, իւր սրտի, կեանքի փոփոխութիւններով; Եւ դա առ այժմ մեր նոր բանաստեղծի շատ լաւ լատկութիւններից մէկն է. Հազ գրականութիւնը սուբիեկտիւ բանաստեղծներ քիչ ունի. Ազգափար բանաստեղծներից է Շահաղիզեանը, որի քնարը շատ շուռ լուեց կարծ ժամանակեալ վառուն գործունէութիւնից վետով; Շահաղիզեանը փորձեց չը թագցնել իւր զգացմունքները, չ'ամաչել ասելու, որ նա սիրում է, լացում է, ծիծաղում է, տիրում է, ցաւում է, զմալում է, հիասթափուում է. Մինչդեռ մեր բոլոր կին կեանքը ամաշում էր զգացմունք լաւտնելուց, աշխատում էր ամեն տեղ լինել խելօք, խորհող, մտածող, զգացմունքներ զսպող, զգականութիւն սանձող և ալլն. Կար մի ուրիշ շատ լարգելի և հասկանալի պատճառ զգացմունքների քիչ չափով արտապատւելուն. դա հասարակական կեանքի հանգամանքներն էին, որոնք պահանջում էին սակաւթիւ հասարակական գործողներից և զրողներից—հասարակական զգացմունքների և սիրած գաղափարների ընդհանուր և լուրջ արտալարտութիւն և ոչ առօրեակ ցաւ ու խնդումի ժամանակագրութիւն. Թէև հասարակութեան դրութիւնը շատ էլ չէ փոխւած՝ անու ամնապնիւ նա այժմ շատ ընդհանուր բաններ գիտէ և պահանջում է բանաստեղծից մի կողմից զգացմունքների աշխարհի ծաւալում, լախացում, միւս կողմից իսկական ոգերութեան թարմ և սրտաբուղս զգացմունքի, սիրութափանցող և վասող գաղափարների ուժգին արտապատութիւն. Այդ պատճառով հասարակութիւնը հետաքրքրուում է ամեն մի անկեղծ անձով, որ ուշադիր է իւր զգացմունքների անարատ և հարազատ արձանագրւելուն, թէկուզ նա ժամանակաւորապէս զրաղւած լինի զգացմունքների աւելի սահմանափակ շրջանով:

Ի հարկէ պ. Յովհաննիսեանը պէտք է նոր և ուժեղ ապացուցներ տակ ապունեատե, որ նա ոչ միայն զգալ գիտէ, ալլ և գիտէ զգացնել, ոգերել, թարմացնել, որ նա լախացնում է իւր զգացմունքների, մտածմունքների ծաւալը և բարձրացնում է նոցա ամիոփը:

Իսկ այժմ պ. Յովհաննիսեանի զրքուկը ալդ կողմից միայն մի քանի ակնարկներ է տալիս մեզ, և այս ոչ բաւականաչափ լաջողւած. Հասարակական զգացմունքները շատ են ընդհանուր կերպով ներկաւացրած, իսկ

ժողովրդականութիւնը, որի փորձերը պատկանում են վերջին տարիններին, —հնարած, արհեստական, շինծու։

Պ. Յովհաննիսեանի ոտանաւորների վերակ բացի ուրիշներից ազգած են Շահաղիզեանի բանաստեղծական գրաւծքները, Դրելու և յօրինելու եղանակները, բառերի ընտրութիւնը, նոցա դասաւորելու ձեր—ցոց են տալիս, որ Շահաղիզեանը ունեցել է, զանձին ա. Յովհաննիսեանի, շատ ուշադիր և գրաւած ընթերցող, Շատ օրինակներ չը բերելու համար, առաջ բերենք ալստեղ երկու ոտանաւորներ՝ մէկը Շահաղիզեանի, միւսը՝ Յովհաննիսեանի միենոն նիւթի մասին իւրաքանչիւրից հանած երկու-երկու տուն։

Շահաղիզեան

Եւ ես երբեմն երգում էի
Անհոգ քնարիս լարերով
Գեղեցկութիւն միայն սէրի,
Վառուած նորա լուզմոն քով։

Ես զօրացակ խորտակեցի
Ալդ մուզավի բանութիւն
Եւ սերտ սիրով ողջոնեցի
Քրտնաջան աշխատութիւն։

Յովհաննիսեան (Նրես 93)

Սրբ մատաղ մուսաս ժպիտն երեսին.
Առաջին անգամ ինձ երեսցաւ.
Միայն գեղեցկութեան, սիրու պատկերին
Երկրպագելու ինձ պատուէր տուաւ։

Անցան տարիններ, և ներքին մի ձան
Մի նոր հուր վառեց իմ լուզուած հոգում,
Սրբ վըրաս ինչպէս կապար ծանրացան
Կեանքի պիտուքը, մարդկան չարութիւն։

Պ. Յովհաննիսեանը ունի իւր գրքում թարգմանութիւններ, որոնց կարելի է ըստ մեծի մասին համարել լաջողւած, Մենք շատ քիչ ունինք լաւ թարգմանիչներ, և պ. Յովհաննիսեանը պէտք է շատ մեծ տեղ բռնի մեր թարգմանիչների շարքում, ձիշդ է, նադասնի ոտանաւորների բնադիրը աւելի ուժեղ տպաւորութիւն է թողնում, քան պ. Յովհաննիսեանի թարգմանութիւնը, բայց և աճպէս ընթերցողի համար զգալի է, որ լաւ գրողի ձեռքին է թարգմանութեան նիւթը։

Ակժմ խօսենք պ. Յովհաննիսեանի լեզուի մասին։ Լեզուն հարուստ է բառերով, դարձւածներով և ընտիր նախաղասութիւններով։ Զորօրինակ, գեղեցիկ է ձեսկերպած այն միտքը թէ՝

Ուր միան մէկի ծառն երջանկութեան
Բուսնում է տասի աւերակներից,
Ուր մի ժպիտը ծաղկում է միան
Հարիւրաւորի աղի արցունքից... (Երես 55)

Ես էլ մտերիմ քեզ հանդէս ելակ
Կուուին բերելու ոգևորութիւն, և ալճ,

Բաց ալդ բառերը շատ են լզկած, շատ են ձեռդ և շատ են օլիմպիական կաղմածքի. ուստի իրանց կրկնութիւններով նոքա մի տեսակ միօրինակութիւն են առաջ բերում. Ընտիր բառերով զրաւելը հասցըել է զրաբարականութեան, խրթին ասացւածների, անհասկանալի, անբովանդակ ու սիսալ նախաղասութիւնների և առհասարակ բառամոլութեան. Բերենք օրինակներ։

Ոտանաւորների մէջ անպէս են տարւած խօսքերը, որ սաղում է ասել՝

գլուխ աշխատաւորի,
կաչը խօսքի,
ուք և ալճ,

Ի՞նչ են նշանակում 4-րդ և 5-րդ տողերը հետևեալ ոտանաւորում։

Ակտեղ պերճափառ վարդ չէ բուսանում
Միան տատասկը և փուշը վալրի
Եւ կեանքը մեռած և օդը խեղդող,
Սրտացաւ խնամք, եթէ ալդ լինէր,
Միշտ երախտամոռ հոգուց ոտնակոխ.
Չէ ժպտում արե, սևաթողը ամպեր
Գոռ փոթորիկ են երկրին գուշակում։

Զորրորդ և հինգերորդ տողերը հասկանալու համար հարկաւոր է շատ մտածել և զանազան ենթադրութիւնների դիմուլ։ Երբեմն բոլորովին մուգ են մնում ամբողջ տոհներ կամ ամբողջ ոտանաւորներ. զորօրինակ, ալդպէս է «Առաւօտս անցաւ» ոտանաւորը։

Զարմանալի տեսակ են և մի քանի համումատութիւնները. Դեռ կարելի է երևակաբէլ մի կերպ՝ «շրթունքը քաղցր է մնդրից», Բաց լ'նչպէս մարդ հասկանաւ «քաղցր ինչպէս կնդրուկ» (106 Երես), «նաղելի կուրծք» (Երես 4) և ալճ։

Բառամոլութիւնը նկատելի է ոչ միան պ. Յովհաննիսեանի, ալ և ուրիշնե-

րի գրւածների մէջ և զա կարծես թէ մի ժամանակակից ախտ է զառնում. Քիչ է մնում, որ մի կաղնի, մի քարի, մի աղբիւրի մասին խօսելուս ևս այնքան էլ ընակիր բառեր կուտափին, որչափ և առսկի երազների կամ ամօթիւած կուսիր մասին, ևս ադ շատ հեշտ է լավտնի բառերի միջոցով. Բաւական է, եթէ կաղնի տեղ ասէի՝ տապար, քարի տեղ՝ վէմ կամ խիճ, աղբիւրի փոխարքն՝ աղբերակ կամ վտակ և ալճ. Ալդպիտով միտքը պքողում է բառերի ծանրութեան տակ. Դիցուք՝ դուք կամնում էք մի հասարակ միտք լավտնել, որի մէջ ոչ մի առանձին բանաստեղծական բան չը կար. զորօրինակ, «աս նստած էի սարի զիլին և խորոված էի ուսում», Դուք կարող էք բառեր կուտափել ադ կարճ նախաղասութեան վերա և տպաւորութիւն զործել, մերձաւորաբար ալսպէս.

«Ես նստած էի հսկաէ լեռան ահեղ գագաթին, Զմրխստեալ արօտը իւր կանաչ թաւիշով արքալական գորդ էր սփռել ոտքերիս տակ. Լուսում էի առւակի անհոգ խոխոջիւնը, Նորա արծաթի ձախով մրմնջող քրքիջը և ուտում էի... Ներողութիւն, ալդպէս չէ կարելի—և անձնասուր եղած բնութեան կեանքին, կանում էի ագահ նորա բարիքը—ադ արօտների հարազատ գառնուկի խորովածը»

Ես ինձ թով տւի ալս փոքրիկ օրինակը բերելու այն նպատակով, որ ցոլց տամ, թէ ի՞նչպէս կարելի է բառերի միջոցով տպաւորութիւն գործել առանց մնծ ովերութեան, առանց բանաստեղծական խորին ներշնչումի. Պ. Յովհաննիսանը փոքր չափով նոխալու մեղանչում է, և կարևոր համարեցի ակժմեանից իսկ կանդ առնելու ադ կէտի վերալ, որպէս զի մեր հեղինակները չը գրաւեն բոպէական գործելիք տպաւորութիւնից, ազ զգացմունքով խօսեն ան բանի մասին միան, որը պատճառ է եղել իսկապէս ովերութեան և զգացմունքին:

Նամանաւանդ հեշտ է փոխ առնել բառեր Շահազիզեանից, որի բերանում միենան բառերը իբրև նոր (իւր ժամանակ) գործածւածներ, շատ հետաքրքրական էին և բնաորոշ, բալց նմուշների փոխ առնողների ձեռքում—երբեմն դառնում են շատ անկաջող, Շահազիզական բառերից փշնէք մի քանիսը.—աչագեղ, մեղեղի, օրհներդ, սրբազն, վախելչութիւնից, ծաղկավու, կանաչավառ, անդուռն բերան, շուշան, մարմարիոն և ալճն,

Բաւականանալով ադ ընդհանուր նկատողութիւններով, անցնենք առանձին ոտանաւորներին և կարդանք նոցա աւելի ուշադիր կերպով:

II

Գիրքը սկսում է մի գրաւիչ ոտանաւորով, որ նկիրած է բանաստեղծի ընկերներին. Սական լաւ քննելով ոտանաւորը, տեսնում ենք, որ նա թով է, նորա մէջ լավտնած մտքերը խառն են և շատ ընդհանուր ձեռվագաւած:

Զեղ եմ նուիրում իմ անվարժ տողեր.
 Զեղ իմ ընկերներ, որ մաքուր սրտով,
 Դեռ պահպանում էք ազնիւ միտք և սէր,
 Որ կեանքն էք տեսնում դեռ պարզ հաւատով.
 Եւ սիրելի է պատաճեկութիւն,
 Ազդ վառ հաւատը սակի երազներ,—
 Թէպէտ և քակէ բաղդն անագորոն
 Մեր սիրուն պսակի չքնաղ ծաղկներ. (Երես 1)

Կարծես գրողը ինքը ծերէ և ինքն էլ չէ հաւատում, որ կարող է մի
 որ և է ազնիւ միտք և սէր միալ աս աշխարհում.—Եւ բնչ է նշանակում՝
 «աիրուն պսակի չքնաղ ծաղկներո» Ո՞վ է, բնչ է ազդ պսակը. Անցնենք
 միա ստանաւորներին, որ կրում է «Երկու ճանապարհ» խորագիրը (Երես
 3—5)

Նալում եմ առաջ—երկու ճանապարհ
 Բաց է իմ դիմաց. մէկը տանում է
 Նքեղ, բաղդաւոր նուիրական աշխարհ
 Քնքուշ զգացմունքի, ուր միշտ ծաղկում է
 Գարունը սիրոց երկնքից օրհնած:
 Անտեղ անթառամ վարդի պսակներ,
 Երջանիկ օրեր սիրով զարդարուած
 Եւ վաէելչութեան անձկալի ժամեր
 Աշխատաւորի վաստակաւոր գլխին
 Պիտի պարզեն հանգիստ խնդագին:
 Միւսն անապատ ինձ դուրս է հանում,
 Որ կարօտում է մըշակող բազկիւ
 Ակստեղ պերճափառ վարդ չէ բուսանում,—
 Միւտն տաստասկը և փուշը վալրի
 Եւ՝ կեանքը մեռած և օդը խեղդող...
 Զէ ժպտում արև, մեաթուր ամպեր
 Գոռ փոթորիկ են երկրին գուշակում:
 Եւ ես կանգնած եմ և խոր մըտածում
 Ուր իմ անհաստատ քավերըս ուղղեմ.
 Արդեօք երկուսից ես որը ընտրեմ:
 Բայց անտեղ կեանքը չունի նպատակ
 Բացի անձնական բարօրութիւնից,
 Խսկ ալստեղ գործի ասպարէզ արձակ,
 Ազնիւ և վախեմ, թէև փշալից:—
 Եւ ես կանգնած եմ և խոր մըտածում...
 Կեանք, ինձ երկուսից որն ես պատրաստում:

Բաւականին լաջողւած ոտանաւոր է. սական հակապատկերների համատութիւնները փոքր ինչ միամիտ են. Մի կողմում աղջիկ է և սիրու գարուն, միւս կողմում՝ «օդ խեղող», տատասկ և փուշ վարի, սեաթուր ամպեր, չէ ժպտում արեա: Թէև բանաստեղծի համակրութիւնը երկրորդ ճանապարհի կողմն է, բայց նա ինքն իրան չի հաւատում և սպասում է կեանքի բերմունքին, հանգամանքների հոսանքին, ի միջի ազոց մնում է անհասկանալի «աշխատաւոր» բառը առաջին ճանապարհի վերակ (տես 9-րորդ տողը) — ինչ գործ ունի անտեղ աշխատ աւորը:

Բանանք մի ուրիշ երես և կարդանք.

Տեսել ես արդեօք այն բլուրները,

Ուր ճոխ ժաղկում է մշտական դարուն,

Կանաչում թաղուած այն աղիները,

Ուր իբրև զոհար խաղողն է հասնում: (Երես 8)

Յաջողւած բանաստեղծութիւն է. բայց արդեօք արհեստական չէ հետևեալը.

...հարաւոր դուստրը, հրապուրքն աչերին,

Շրթունքը ալ վարդ, ժպիտն անթառամ...

Սիրատանջ ալլուած քնքուշ ալտերից

Փաղել ես համբուր, որ քաղցր է մողրից:

ԱՆՑԵՆՔ մի գեղեցիկ ոտանաւորի, որից կ'արտադրենք մեծ մասը (Երես 14—15):

Որպէս լաղթանդամ մի ծերուկ հոկակ կախուած է ժաւուք ջրերի վըրակ.

Ալլքը կատառ դնում են զալիս

Նւ ժակուկն սիրու համբուր են տալիս:

Խաղում են անհոգ ալիքը գետի,

Ցուցնում են գրկած պատկերն արևի,

Եւ որպէս մանուկ ժպիտն երեսին

Մեղմիկ շշոնչով խօսում են ժակուխն.

«Լսիր, ծերունի, ինչու ճակատիդ

Սև կճճիռները չեն տալիս դէմքիդ

Մի օր խնդութեան շողով ցոլանալ—

Ողջը փոխում է, զու նոյնն ես դարձեալ:

«Եւ քո ականջին միշտ սիրու երգեր

ՄԵՆՔ արշալուածից կ'ասենք մինչ աստղեր,

Եւ քեզ կը փարենք և քո ծեր կուրծքին

ՄԵՆՔ հանդչել կը տանք մեր քաղցըր կրքին...»

Ալիքը կատառ գնում են զալիս,
Աև ժաղու նախկին իւր վիշտն է լալիս...
Խաղում են ալիք, ուրախ կարկաջում—
Նա կրկին անշարժ, նա կրկին տրտում...

Անհասկանալի է թէ ինչու ժայռը նկարագրուած է վշտով, ժայռ և
վիշտ—ինչ առնչութիւն, լաւ է, որ ժայռն էլ չէ խօսում իւր կողմից.
Ալիքների խօսակցութիւնը աւելի բնական կը լինէր, եթէ նոքա խոստ-
մունքներով չը խօսէին, այլ ուղղակի նկարագրէին. փոխանակ ասելու
«կը փարենք», ասէին՝ փարում ենք, փոխանակ «հանդին կը տանք»—հանդ-
չել ենք տալիս, փոխանակ՝ կ'ասենք—ասում ենք և ալին:

(Ա. Ներակ) ոտանաւորը (Երես 16) լաջողաւած է, զգացումները ճիշդ
են. բայց շատ մաշաւած է նորա թիման—«աշխարհս անցողական է»: Անց-
նենք հետևեալ ոտանաւորին.

Ա՛խ, տուեք ինձ քաղցըր մի քուն
Կեանքից հեռու սըլանամ
Ան աշխարհը, ուր խնդութիւն,
Ուր սէրն է միշտ անթառամ.
Քնքուշ վարդերն ինձ բարձ լինին,
Վառ կանաչից իմ վերմակ.—
Եւ աչագեղ կուն ականջիս
Իւր մեղմուին նուագէ
Եւ հերարձակ սիրով վզիս
Փարէ, մեղմիկ փաղաքշէ... (Երես 17—18)

Գուցէ քուն ասւած է երազի մտքով, որովհետեւ միւս նախադասու-
թիւնները չեն համապատասխանում քնին. Երազ է թէ քուն, բայց բա-
նաստեղծի ցանկութիւնները բաւականին խալամական են, աշամական և
անիրազործելի չեն այս աշխարհում:

Ցակոր քահանակ Սուրբէնեանցի վշտակին գրած ոտանաւորը (Երես
23—24) աւելի փիլաստիքալութիւններով է դրագւած, քան թէ զգացմունք-
ներ լախուելով. միտքը տեղ տեղ հետևողական չէ:

Թօղ հանդչի գլուխն աշխատաւորի
Կեանքի հոգսերից մալր երկրի կրծքում,
Որ վեհ խորհրդի, աղնիւ մոքերի
Տուել էր նորան ընդունակութիւն,
Եւ թող ըընութիւն շքեղ պեճուած
Ամենակն դարուն, զերթ չընաղ մանուկ,
Իբրև երդ սիրոց հնչէ լանտարած
Անխոնջ մշակին անուն մնծաշուք:

Ինչպէս թէ՝ բնութիւնը հնչէ անխոնջ մշակի մեծաշուք անունը. Միթէ բնութիւնը զանազանութիւններ է դնում լաւ և վատ՝ կամ աշխատասէր և ծով մարդերի մէջ և մէկի գերեզմանը զարդարում է ծաղիկներով, իսկ միւսինը՝ զրկում նոցանից. Ինչո՞ւ պէտք է զգացմոնքը ալզպէս սխալ տողեր թեւաղործ բանաստեղծին. Միթէ չէր կարելի ընդհակառակը աւելի ճիշդ զգացմոնք լատոնել այն բանի մասին, որ բնութիւնը սառն է և անտարբեր և ալդ թեմալով մի հրաշալի ոտանաւոր գրել, ինչպէս է մասամբ վերեք վիշած «Որպէս լաղթանդամ մի ծերուկ հսկաց ոտանաւորը. Շարունակենք կարդալ գրքովկը, տեսնենք ինչ է ասում «Գիշերուան երգը (Երես 26—28):

«Գիշերուան երգը» (Երես 26—28)

Տխուր նստած եմ սենեկում փակուած

Եւ հաղար մի վիշտ սիրաց են նեղում...

Դուրսը մութն է, ցուրտ, քամին կատաղած

Իմ լուսամուտը ծեծում է, ծեծում:

Զարատանջ պանդուխտ, քամին զու ձմրան,

Ի՞նչ ևս կամենում. ինչո՞ւ անհանդիստ

Պատեցնում ես տարափները ձեան,

Ի՞նչ ես զու երգում. ալդ սէր է թէ վիշտ...

Արդեօք փախսթ ես, իբրև խորթ զաւակ

Զարչարուած անմիտ հալածանքներից,

Թէ չէ ձանձրացած զու կեանքից դատարկ

Վաղում ես կորած բաղդի կեանից...

Առաջն տունը շատ լաւ է, բնական, զգացւած, ճիշդ. Երկրորդը միան հասկանալի է, բայց զգացմոնքով թով է. միւսները արհեստական են, մտացածին. Ոտպնաւորը մեծ է, նորա վերջին մասերը վատ չեն. բայց իբրև քամու խօսակցութիւն տեղ տեղ անբնական են և արտալաւտում են չափաղանցրած կերպով տպաւորութիւններ.

«Գեղեցիկ օրեր, ծաղկավառ օրեր» ոտանաւորը գրւած է անկեղծ, զգացմունքով. Նորա մէջ կասկածամոռութիւնը, լոռետեսութիւնը, ներքին վշտակրութիւնը մեղմացրած են անորոշութեան հրապուրով:

«Գիշի ժամը» պ. Յովհաննիսեանի բացառիկ փորձերից մէկն է. գրւած է ժողովրդի հասկացողութեան մօտիկ լեզուով.

Տանդո, տանդո—Նաղմաւ, վեր կաց,

Արևն արդէն մաքր է մտնում.

Տես, խաթունն էլ գործը պրծած

Փողոցումն է, ժամ է շտապում.

Ժամը տուին—տանդո, տանդո

Տէր, փառքո շատ, տանդո, տանդո:
 Հարիկը արդէն գընացել է
 Որ փող ճարի, երբ պիտի գալ,
 Տեսնենք մէկը խղճացել է...
 Ա'խ, սև օրը Տէրն էլ չը տակ:

Իրրև բանաստեղծութիւն, միջակ է. չ'ունի լաջող ծրագիր. Թեման
մաշտած է և նորա արտակալտելու ձեզ ոյնչ նորութիւն չ'ունի,

«Աւտարան» ոտանաւորը (երես 41) լաւ թեմա ունի, բայց չէ ջեր-
մացրած խորին զգացմունքով: Աւելի զգացմունք ունի «Լինում է րոպէ»
ոտանաւորը. ափսն անկատար կերպով է արտակալում բանաստեղծի մտած-
մունքների հետևանքը: Բայց թողնենք մի քանի ոտանաւորներ և կանգ
առնենք հետևեալի վերաբ.

Անապատումը երերուն կեանքի...
 Միակ սփոփանքն ես դու, կակտ երկնալին,
 Դու անգին գոհար, սէր, զանձ մարդկութեան.—
 ...Կեանքը սիրել տալիս ես մարդուն
 Քանի տանջուելով ծանր բեռի տակ
 Ճնշուած պիտուքիցն առօրէական
 Դարձնում եմ աշքս ալն ջինջ, կապուտակ
 Երկնքի վերակ անցած մանկութեան,
 Երբ նոյնպէս էին իմ օրերն անցնում
 Անհոգ խաղերով, քաղցրիկ երգերով...
 Ակդ քո պատկերն է, սէր աստուածակին,
 Դու իրրև մի շող կենդանի լուսով
 Միշտ ըորըքում ես սիրոց մարդկակին
 Ապրել անվիատ անվախճան լուսով. (51—52)

Պարզ չէ ոտանաւորի միտքը. Ինչ բանի մասին է ասում բանաստեղծը
«կակտ երկնալին, սէր, զանձ մարդկութեան»: Եթէ սիրոց մասին է խօսքը,
Ինչ առնչութիւն ունին ալն ժամանակ երրորդ և չորրորդ տուները.
Բանաստեղծը նկարագրում է «Աչս օրերումը» (երես 55—56) ոտա-
նաւորի մէջ ահեղ տսպկալի կոիւ.

Ուր միան մէկի ծառն երջանկութեան
 Բուսնում է տասի աւերակներից,
 Ուր մի ժպիտը ծաղկում է միան
 Հարիւրաւորի աղի արցունքից:

Բայց ինքը բանաստեղծը անվիատ շարունակում է իւր ճանապարհը,
ասելով

Թէ գուցէ մի օր և ես գտնում եմ
Աչն, ինչ չը կամի բաղդը տալ սիրով:

Իսկ այն դէպքում, եթէ նա խորտակւած լուսով խոնարհի ճակատագրին, խնդրում է հետևեալը.

Ընկեր սիրելի, դու չը մոռանաս
Յիշել անոնքը մատղահաս երգչի,
Որ գիտէր տանջուել, սիրել հանապազ
Գուցէ երջանիկ օրուան արժանի:

Կարծում ենք, որ սկզբի լուրջ դրութեան հակակշռելու համար շատ-
քիչ է ասւած՝

Որ գիտէր տանջուել, սիրել հանապազ...

Պէտք էր աւելի ուժեղ միտք լավանել, որպէս զի ոտանաւորը չը թու-
լանար. դիցուք լաւանէր բանաստեղծօրէն մի ալս տեսակ բան, որ «խոր
զգում էր վիշտը իւր եղբօր, որ անկեալի բաղդով էր հետաքրքիր, որ մա-
քառում էր չարութեան դէմ, որ ջլառուեց անհաւասար կուից» (գրելու
ձեզ լարմարեցրած եմ հեղինակի գործածածին):

Բանաստեղծը զարմանալի զարձւածներ ունի աղջկակ հետ խօսելուս-
մենք զարմանում ենք, որ նա ասում է իւր աննման հրեշտակին, կամ ա-
ռաջարկում է նորան կարդալու ալս տողերը.

Իրաւունք տուր ծծեմ մեղը շրթունքիդ,
Քաղեմ կարմիր ալդ վարդերը թշերիդ.
Ու որ առնի հոտը շամամ ծծերիդ,
Էլ կարող է թէ մի գին տալ իւր կեանքին (Երես 57):

Գուցէ ժողովրդական լինելու համար են գործածւած «շամամ ծծերը»—
բաց ժամանակն է թողնելու ալդ աջամական համեմատութիւնները: Ի՞նչ
հոտ, ինչ անուշահոտութիւն, բաւական է:

«Երանի նորան» (Երես 61) ոտանաւորի մէջ բանաստեղծը իւր սրտին
սիրելի ցանկութիւններ է լատնում.

Երանի նորան, որ տէր է աղատ
Իւր զգացմունքներին—սիրել և ատել,
Որին բոնութիւն չի տալ լուսահատ
Բաղդիցը զզուած իւր կեանքն անիծել...
Երանի նորան ով շընորհք ունի
Սիրել անձնուէր և անկեղծ սրտով

Սրբել քրտինքը վաստակաւորի
 Նւ տառապեալին խընամել փութով,
 Նւ երկրագու Փրկչի սուրբ խօսքին
 Անտըրտունջ բաշխէ իւր ձեռի լուման...

Երանեալի համար բանաստեղծը փոքր ինչ արիստօկրատիական դիրք է ստեղծում. երանեալը ինքը վաստակաւոր մշակ չէ, «ազ սրբում է քրտինքը վաստակաւորի, անտըրտունջ բաշխում է իւր ձեռի լուման»:

Բանաստեղծը շատ ունի քնարերգական (լիրական) ոտանաւորներ, որոնք զանազան կերպ երգում են սէր և աղջիկ. նոցա մէջ լսում է և լուռ սէր, զմալլում (երես 87), և տանջւած սէր (92) և թառամած սէր և հակասող սիրու զգացմունք (50—60) և ալն. նունպէս չափազանց խոստումներ, զորօրինակ՝

Նւ ես կը հիւսեմ պսակ քո դլսին
 Վառ արշալուսոյ ոսկի շողերից...

Ուրիշ բան է, եթէ մը որ և է դև (Լերմօնտովի) ասում լինէր մի ակդպէս բան. նա ազդպէս խոստումներ կարող էր տալ. բայց մննք՝ աշխարհագիններս ալդ խոստումները չենք կարող իրագործել:

Միա ոտանաւորների վերակ կանգ չենք առնում, զգալով, որ առաջ բերածները բաւականաչափ պարզում են մեր ասելլքի նպատակը:

Վերջացնում ենք մեր քննութիւնը, լամանելով մեր ցանկութիւնը տեսնել շարունակած պ. Ցովհաննիսեանի ստեղծագործութիւնը:

Յօդւածիս առաջին մասում մենք պարզեցինք մեր հակեացքը պ. Ցովհաննիսեանի բանաստեղծութեան մասին. Ազմ կարծ կերպով ձևակերպելով մեր միտքը լայտնում ենք, որ պ. Ցովհաննիսեանը՝ հեղինակելու, լորիներու արհեստը մշակել է կատարելապէս, որ նա իրեւ առաջին գրական փորձ տեւլ է աչքի ընկնող գրքով աճնպիսի երեսներով, ինչպիսիներն են 8, 14, 48, 81, 100, 108, 112 և մի քանի ուրիշները. Զը պէտք է ծածկենք սակալն, որ պ. Ցովհաննիսեանը ոչ մի նոր ուղղութիւն չի մտցրել մեր բանաստեղծական գրականութեան մէջ, ոչ մի նոր, ինքնուրուն խընդիր չէ դնում մեր առաջ, նա չէ գործում մի լաւոնի գաղափարով տոգորւածի տպաւրութիւն և ալդ պատճառով չէ կապում հասարակութիւնը իւր հետ որոշ լարաբերութիւններով. մինչդեռ այն առարկաները, որոնք նորա գրելու նիւթերն են, և այն ո՞ը, որ բանաստեղծը գործ է ածում ոտանաւորների մէջ, ցուց են տալիս, որ նա ձգտում է լինել հասարակական շահերի ջատագով. Բարի լաջողութիւն: